Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Բ.

ԿՏԱԿԱԳԻՐ
ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻ

Գ.

ԿՏԱԿԱԳԻՐ
ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԿԱԶԱՃԿԵԱՆՑԻ

Դ.

ԿՏԱԿԱԳԻՐ
ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑԻ

12813

1910

ՏՊԱԳՐ. ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԿԱԼԱԹԱ–Կ. ՊՈԼԻՍ

12813

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1892

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 1. *Սանասարեան Վարժարանը, որ հիմնուած է Հոգելոյս Մկրտիչ Սանասարեանի արդիւնքով, կը կրէ իւր Հիմնադրի անունը և պէտք է յարատեւէ նորա կտակի տրամադրութեանց համաձայն։*

Յօդ. 2. *Սանասարեան Վարժարանը ենթարկուած լինելով Ազգային Հոգեւոր Իշխանութեան՝ կը գտնուի Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռոյ Գահակալ ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի հայրական հովանաւորութեան ներքեւ։*

Յօդ. 3. *Սանասարեան Վարժարանի նպատակն է դաստիարակել Հայ մանկտին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ոգւոյն և կանոնաց համաձայն, աւանդել նորա ընդհանուր կրթութիւն և ուսում և կրթել զնա արհեստից* (Handwerk–métier) *և արուեստագիտութեան* (Industrie) *մէջ։*

Յօդ. 4. *Վարժարանը ունի,*

Ա. *Ընդհանուր Կրթական Դասընթացք, որ կը պարունակէ ազգային կրօնին, լեզուին և պատմութեան վերաբերեալ գիտութիւնները և բոլոր այն լեզուները և գիտական ու գեղարուեստական ուսումները զորս ժամանակը կը պահանջէ և վարժարանի նիւթական միջոցները կը ներեն ներմուծել։*

Բ. *Արհեստագիտական բաժին, որ կը պարունակէ այն արհեստներն ու արուեստագիտական ճիւղերը, զորս ժամանակը և տեղական հանգամանքները կը պահանջեն և վարժարանի նիւթական միջոցները կը ներեն ներմուծել։*

Յօդ. 5. *Վարժարանի գոյութիւնը և յարատեւութիւնը ապահովուած*

II ա
1584

են հոգելոյս Մկրտիչ Սանասարեանի նուիրած ու կտակած Դրամագլխովն (կալուած, արժէթուղթ ևն) որ Վարժարանի անձեռնմխելի սեպհականութիւնն է ընդ միշտ։

Յօդ. 6. Վարժարանի արժէթղթերը ի պահ կը դրուին Եւրոպայի Պետական դրամատանց մէջ, նոցա ընկալագրերը և Վարժարանի անշարժ ստացուածոց կալուածագրերը կը պահուին Խնամակալութեան հսկողութեան ներքեւ։

Յօդ. 7 Վարժարանի օգտին և զարգացման համար եղած որ և է նպաստ կամ նուիրատուութիւն կամ կտակ չէ կարող փոխել ոչ Վարժարանի անունը, ոչ նորա նպատակը և ուղղութիւնը և ոչ Սանասարեան կտակի տրամադրութիւնները։

Յօդ. 8. Վարժարանի նիւթական մատակարարութեան յատկացեալ միջոցներն են՝ կալուածոց եկամուտք, արժէթղթոց տոկոսիք և աշակերտաց թոշակք, նուիրատուութիւնք, արհեստանոցներու արդիւնքներ և այլ պատահական հասոյթներ։

Յօդ. 9. Վարժարանի եկամտոյցով նախատեսուած ծախքերը մատակարարուելէ յետոյ աւելցած դրամով կը կազմուի Պահեստի գումարմը, զոր մի միայն Խնամակալութիւնը կարող է ծախսել Վարժարանի արտակարգ պիտոյից համար։

Յօդ. 10. Վարժարանի Հիմնադրին կտակած հասութից հարիւրին տասը (10 %) կը մնայ յատկացեալ այն սաներու ծախուց, զորս Վարժարանի Վարիչ Մարմինք յարմար կը դատեն Եւրոպա ուղարկել կատարելագործուելու համար։

Յօդ. 11. Եւրոպա ուղարկուելիք սաները պէտք է ընտրուին գլխաւորաբար Վարժարանին հօրէ և մօրէ որդի ձրիավարժներէն և ի դարձին պարտաւոր են իրենց գործունէութիւնը նուիրել Սանասարեան Վարժարանին և կամ Վարժարանի Վարիչ Մարմնոյ անօրէնութեամբ մի այլ ազգային կրթական հաստատութեան, նախապէս որոշուած պայմաններուն համաձայն։

Յօդ. 12. Աշակերտք կարող են լինել գիշերօթիկ և ցերեկեայ, թոշակաւոր և ձրիավարժ։ Ձրիավարժք կ'ընտրուին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հարազատ զաւակներէն, և նոցա թիւը երեսունէն նուազ պէտք չէ լինի Վարժարանի մէջ։

Յօդ. 13. Բացի օտար լեզուներէն բոլոր դասերը պիտի աւանդուին Հայերէն։

Յօդ. 14. Երբ Վարժարանի նիւթական միջոցները թոյլատրեն, Վարժարանի Վարիչ Մարմինք կարող են Հայաբնակ տեղերու մէջ դպրոցներու բացման կամ զարգացման նպաստել, կանխաւ նշանակելով նոցա յատկանալիք ծախքը Վարժարանի եկամտացոյցի մէջ։

Յօդ. 15. Վարժարանի Վարիչ Մարմիններու անդամք պէտք է լինին Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ զաւակներ։

Յօդ. 16. Կտակակատարների իրաւասութեան կը պատկանի ըստ կտակին, ցորչափ նոցանից երկուք կենդանի են, Վարժարանի կալուածների, կտակեալ դրամների և գոյքերի վերին հսկողութիւնը։

Վարժարանի կալուածները և արժէթղթերը վաճառելու, փոխանակելու կամ 'ի նորոյ դնելու իրաւունքը վերապահուած է՝ ըստ կտակի կտակակատարներին, ցորչափ նոցանէ երկուքը կենդանի են և կորոշին ձայնին մեծամասնութեամբ։

Իսկ կտակակատարաց երկուքին մահուանէ յետոյ ոչ ոք իրաւունք չունի Վարժարանին պատկանեալ թէ անշարժ ստացուածքը և թէ հասութաբեր արժէթղթերը վաճառելու, գրաւ դնելու և ոչ ալ պարտքի ենթարկելու, զի նոքա Վարժարանի անծախելի և մշտնջենաւոր սեպհականութիւնքն են։

Նմանապէս Վարժարանի Վարիչ Մարմնոյ ոչ մէկը իրաւունք չունի որ և իցէ կերպիւ պարտքի ենթարկելու Վարժարանը։

Յօդ. 17. Կտակակատար Լեւոն Տիգրանեան իրաւունք ունի ըստ կտակի երեք սան նշանակել Վարժարանի ձրիավարժ աշակերտաց թուոյն մէջ, ըստ ամենայնի համաձայն Վարժարանի ձրիավարժ աշակերտաց ընդունելութեան համար սահմանուած կանոններուն։

Լեւոն Տիգրանեանի այս իրաւունքը նորա մահէն յետոյ կը փոխանցի յաջորդաբար նորա սերունդի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյն պատկանող արու աւագաղունին։

Յօդ. 18. Վարժարանի վերաբերեալ ինչ ինչ խնդրոց վերջնական ուրոշումը ըստ կտակին (Յօդ. 12 ևն.) վերապահեալ է Կտակատար Կարապետ Եղեանցի՝ ցորչափ կենդանի է։

Բ.

ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆՔ

Յօդ. 19. Վարժարանի գործերը կը վարեն՝

Ա. Կոստանդնուպոլսոյ Խնամակալութիւնը, Սրբազան Պատրիարքի նախագահութեամբ։

Բ. Տեղական Հոգաբարձութիւնը, Թեմական Առաջնորդի նախագահութեամբ։

Գ. Վարժարանի վերատեսուչը։

Դ. Վարժարանի Ուսուցչական Մանաժողովը, Վերատեսչի ատենապետութեամբ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Յօդ. 20. Կոստանդնուպոլսոյ Խնամակալութիւնը կը կազմուի ընդհանրութեան համակրութիւնը և վստահութիւնը վայելող Պոլսեցիներէ վեց առաջնակարգ ազգայիններէ, ընդ նախագահութեամբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Փոխանորդին 'ի Տաճկաստան։

Պատրիարքական աթոռը թափուր մնացած միջոցին նախագահութեան պաշտօնը կը վարէ Պատրիարքական Տեղապահն և 'ի բացակայութեան սորա Խնամակալութիւնը իր մէջէն կ'ընտրէ առօրեայ Ատենապետ։

Յօդ. 21. Խնամակալութեան առաջին անգամու ընտրութիւնը կատարուելէ և հաստատուելէ յետոյ՝ երբ մահուան, հրաժարման և կամ այլ որ և է պատճառաւ նորա մի կամ աւելի անդամք պակասին, մնացեալ անդամները յատուկ նստի մը մէջ հարկ եղած թուով երկպատիկ ցանկ մը կը պատրաստեն ըստ կանոնագրիս սահմանեալ հանգամանաց օժտեալ ընտրելեաց և կը մատուցանեն դայն Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքին, որ նորա մէջէն կ'ընտրէ Խնամակալութեան թիւն ամբողջացնելու համար հարկ եղած անդամներն։

Եթէ ներկայացեալ ցանկը գոհացուցիչ հանգամանքէ զուրկ լինի, Սրբազան Պատրիարքը կը վերադարձնէ դայն 'ի պատրաստութիւն լաւագունին։

Եթէ Խնամակալութեան անդամը մի ամսէ աւելի յապաղին ընտրելեաց ցանկ ներկայացնել, Սրբազան Պատրիարքն ինքն կ'ընտրէ պակասեալ անդամները արժանաւոր անձերէ։

Սրբազան Պատրիարքը Խանմակալութեան Նախագահի հանգամանքին պարտաւոր է ներկայ գտնուիլ նորա ամսական նիստերուն և հոգածու լինել Խնամակալութեան անդամոց գործունեայ պաշտօնավարութեան և ինչպէս նաև սոյն յօդուածի տրամադրութեանց անվրէպ գործադրութեան։

Յօդ. 22. Խնամակալութեան պաշտօնն է՝

Ա. Խնամ տանիլ Վարժարանի անշարժ ստացուածոց և

արժէքներոց պահպանման և անօրինել նոցա բարւոք արդիւնաւորման և պահեստի ու յաւելեալ դրամոց գործածման և պահպանման եղանակները։

Բ. Որոնել նորանոր աղբիւրներ Վարժարանի նիւթական միջոցները աւելցնելուհամար։

Գ. Անընդմիջաբար հսկել տեղական Հոգաբարձութեան պաշտօնավարութեան վրայ։

Դ. Բարեփոխել և վաւերացնել Հոգաբարձութեան ներկայացուցած տարեկան ելեմտացոյցը և վերադարձնել Հոգաբարձութեան ի գործադրութիւն։

Ե. Քննել և վաւերացնել իւրաքանչիւր տարուան հաշիւները։

Զ. Ներկայացուցիչ և պաշտպան հանդիսանալ ամէնուրեք Վարժարանին և նորա շահերուն կեդրոնական ատեաններուն և դատարաններու առաջ, թէ Թուրքիոյ մէջ և թէ այլուր։

Է. Դատավարել նոցա դէմ, որոնք որ և է կերպիւ կը վնասեն Վարժարանին նիւթապէս և բարոյապէս։

Ը. Ջեռնուու և պաշտպան կանգնել Հոգաբարձութեան։

Թ. Պարբերաբար հաշիւ ու համար առնուլ Հոգաբարձութենէն և լուծել վէճերն ու վճռել խնդիրները։

Ժ. Ամբողջացնելով հրատարակել Հոգաբարձութեան պատրաստած տարեկան տեղեկագիրը Վարժարանի նիւթական վիճակի, նորա ստացուածոց, գոյից և ելեմտից վերաբերեալ, հանդերձ Վերատեսչի պատրաստած տեղեկագրով, Վարժարանի ուսումնական, բարոյական և առողջական կացութեան վերաբերեալ։

Յօդ. 23. Խնամակալութիւնը կ'ընտրէ՝ յետ նախապէս ընելոյ Հոգաբարձութեան և ուսուցչական Մանաժողովոյ կարծիքն, Վարժարանի Վերատեսուչը, Հայոց լեզուի, պատմութեան և կեանքին ծանօթ, բարձրագոյն կրթութիւն ստացած և մանկավարժութեան հմուտ անձերէն։

Նախադասելի են Սանասարեան Վարժարանի ընթացաւարտներէն Եւրոպա կատարելագործուած և վկայեալ անձերը և Վարժարանի մէջ պաշտօն վարող ուսուցիչները։

Խնամակալութեան վերապահուած է նմանապէս Վերատեսուչ արձակելու իրաւունքը։

Վերատեսչի ընտրութեան և արձակման մասին Խնամակալութեան որոշմունք կը տրուին առ նուազն հինգ ձայնից միաբանութեամբ։

Խնամակալութիւնն իրաւունք ունի Հոգաբարձութեան առաջարկութեամբ արձակուրդ տալ Վերատեսչին մինչեւ երկու ամիս։ Վկայեալ ծանր հիւանդութեան պարագայի մէջ՝ Խնամակալութիւնը

կարող է երկարաձգել արձակուրդը՝ իրեն վերապահելով թոշակ վճարելու կամ չվճարելու որոշումը։

Յօդ. 24 Խնամակալութիւնը պարտաւոր է ամիսը մի անգամ նիստ նշանակել և ի հարկին կ՚ունենայ պատահական նիստեր։ Իւր որոշումները պէտք է արձանագրուին յատուկ ատենագրութեանց մէջ և ստորագրուին ներկայ անդամներէն։

Յօդ. 25. Խնամակալութեան նիստերէն առանց բանաւոր պատճառի երեք անգամ յաջորդաբար բացակայ դտնուող անդամը հրաժարեալ կը համարուի և ուրիշը կ՚ընտրուի նորա տեղը։

Յօդ. 26. Խնամակալութեան նիստը օրինաւոր կը համարուի երբ անդամներէն գոնէ չորսը ներկայ են։ Իսկ որոշմունք արուելու են ձայնից մեծամասնութեամբ։

Յօդ. 27. Խնամակալութեան պաշտօնն ու իրաւասութիւնք կը մնան անվթար, ցորչափ վարժարանը դտնուի Օմանեան հողի վրայ։ Իսկ եթէ երբեք հարկ լինի ըստ կտակի փոխադրել զայն ուրիշ երկիր, այդ պարագային մէջ Խնամակալութեան պաշտօնն և իրաւասութիւնը կը փոխանցուին այն մարմնոյն՝ զոր կը կազմէ Սուրբ Էջմիածնայ Մայր Աթոռոյ Գահակալ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը, հիմն ունենալով Հիմնադրի կտակը և ներկայ Կանոնադրութիւնս։

Վեհափառ Կաթուղիկոսը կարող է յիշեալ պարագայի մէջ ևս, երբ հարկ տեսնէ և յարմար դատէ, պահել Կոստանդնուպոլսոյ Խնամակալութիւնն իւր պաշտօնի մէջ մասնակի կամ ամբողջական իրաւասութեամբ։

ՏԵՂԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 28. Տեղական Հոգաբարձութիւնը ընդ նախագահութեամբ Թեմական Առաջնորդին կը կազմուի այն տեղ, ուր կը դտնուի Սանասարեան վարժարանը։

1. Հոգաբարձութեան անդամ կ՚անուանին՝

Ա. Վարժարանի Վերատեսուչը։

Բ. Ուսուցչական Մասնաժողովին կողմէն և իւր մէջէն ընտրուած երկու անձինք։

Գ. Քաղաքին Հայ եկեղեցեաց ժողովրդեան կողմէն ընտրուած երեք անձինք։

Դ. Վարժարանի ընթացաւարտ աշակերտաց կողմէն և իրենց մէջէն ընտրուած մի անձ։

2. Իրաւամբ անդամ են ցկեանս՝

Ա. Վարժարանի ներկայ Տեսչութեան երեքին անդամք և սանուն՝ Սանասարեանի, Գէորգ Աբուլեանց, Յովսէփի Մատաթեան և Սարգիս Սողիկեան։

Բ. Այն անձինք, որոնք միանուագ կը նուիրեն վարժարանին հազար Օսմանեան լիրա կամ մի համարժէք ստացուածք։

Գ. Վարժարանիկ Ուսուցչական Մասնաժողովի այն անդամները, որոնք քսան և հինգ տարի վարժարանին մէջ ուսուցչութիւն ընելէ յետոյ պաշտօնէ կը դադարին։

Դաճօրուրիւն Ա. Ուսուցչական Մասնաժողովը այն ժամանակ իրաւունք կ՚ունենայ իւր մէջէն անդամներ ընտրելու Հոգաբարձութեան համար, երբ արդի Տեսչութեան անդամների թիւը պակասի Հոգաբարձութեան մէջ։

Դաճօրուրիւն Բ. Ընթացաւարտ աշակերտք այն ժամանակ իրաւունք կ՚ունենան իրենց մէջէն մի անդամ ընտրելու Հոգաբարձութեան համար, երբ առ նուազն եօթն լինի ընտրողաց թիւը։

Դաճօրուրիւն Գ. Ընթացաւարտ աշակերտաց կողմէն անդամ ընտրելը արգելք չէ կարող լինել որ քաղաքի ժողովրդեան կողմէն ընտրուած անձինք ևս լինին Սանասարեան վարժարանի ընթացաւարտներէն։

Յօդ. 29. Հոգաբարձութեան պաշտօնն է՝

Ա. Խնամ տանել վարժարանի ընդհանուր բարեկարգութեան։

Բ. Որոնել վարժարանի նիւթական կարողութիւնն ընդարձակելու միջոցները։

Գ. Կարավարել վարժարանի տեղային կալուածները։

Դ. Խնամ տանել վարժարանի դոյից պահպանութեան, հոկելով, որ կանոնաւորապէս Կահագրին մէջ արձանագրուին աւելցած իրեղէնները և զեղչուին պակասները և տարին առ նուազն մի անգամ հաւաքաբար կամ իւր մէջէն ընտրուած անդամներու ձեռքով ստուգել Կահագրի բովանդակութիւնը։

Ե. Պատրաստել հետեւեալ տարուան Ելևմտայոյցը և ներկայացնել վարժարանական տարեգլխէն առ նուազն երեք ամիս առաջ՝ Կ. Պոլսոյ Խնամակալութեան։

Եթէ Խնամակալութիւնը յապաղէ մինչև վարժարանական տարեգլուխ (Սեպտեմբերի 1) վերադարձնել Ելևմտայոյցը՝ Հոգաբարձութիւնը իրաւունք ունի ի գործ դնել զայն, վաւերական համարելով։

Զ. Որոշել աշակերտաց կողմէն վճարելի թոշակի քանակը։

Է. Որոշել ուսուցիչներ՝ ի պաշտօն կոչելու նիւթական պայմանները։

Ը. Հարկ եղած կարգադրութիւնք ընել Թոշակը չվճարող
աշակերտաց մասին։

Թ. Ընտրել Ձրիավարժ աշակերտներ։

Ժ. Ընտրել Եւրոպա ուղարկուելիք սաներ՝ Ուսուցչական
Մասնաժողովի կողմէ առաջարկեալ ցանկի մէջէն, և որոշել նոցա մասին
հարկ եղած պայմանները։

ԺԱ. Ելեմտացոյցի գլխոց մէջ նշանակեալ ծախուց գու-
մարներէն աւելցած մասը, բաց ի կրթական պաշտօնէից վերաբերեալ
գլխոց աւելցած մասերէն, ծախսել նախատեսեալ ուրիշ պիտոյից համար,
սակայն առանց անցնելու ելեմտացոյցով արտօնեալ համագումարին չափը։

ԺԲ. Որոնել և որոշել վարժարանի պիտոյքները հայթայ-
թելու լաւագոյն միջոցները։

ԺԳ. Քննել և որոշել մեծ քանակութեամբ գնուելիք ու-
տեստի, հագուստի և այլն օրինակները։

ԺԴ. Կազմել պայմանագիր Վարժարանի պիտոյքները հայ-
թայթելու համար և հրահանգներ՝ մատակարարութեան համար։

ԺԵ. Նշանակել մի մատակարար կամ տնտես, որոյ պաշ-
տօնը լինի, վերատեսչի անմիջական հսկողութեան ներքեւ, իմաստու-
թեամբ տնտեսել ելեմտացոյցով նշանակեալ գումարները, հոգալ վար-
ժարանի առօրեայ գնումներն ու ծախքերը և ապացուցական թղթերով
ամսական հաշիւ ներկայացնել Հոգաբարձութեան, հսկել վարժարանի
պահպանութեան եւ մաքրութեան վրայ։

ԺԶ. Կազմել հրահանգներ վարժարանի տնտեսի և սպասա-
ւորաց պաշտօնավարութեան համար։

ԺԷ. Ստանալ և ստուգել մատակարարի ամսական հաշիւ-
ները և յանձնել հաշուեպահին արձանագրելու համար։

ԺԸ. Սահմանել նպարեղինաց գնումները և սպառումներն
ստուգելու լաւագոյն եղանակները։

ԺԹ. Որոշել դրամոց գանձման, պահպանման և կիրառու-
թեան եղանակները։

Ծանօթութիւն. Հոգաբարձութեան ձեռքով իւր մէջէն ընտ-
րուած գանձապահը կը գանձէ թոշակներն և այլ հասոյթները և կը դնէ
դրամարկղի մէջ, որոյ երկու տարբեր բանալիներէն մին պիտի մնայ
գանձապահի և միւսը վերատեսուչի մօտ։

Նախագահը իրաւունք ունի, եթէ հարկ համարէ, իւր
կնքով կնքել դրամարկղը և այս պարագային մէջ սա չբացուիր առանց
Նախագահի ներկայութեան։

Ի. Ստուգել իւրաքանչիւր ամսավերջ սնտուկի տումարը,
հաշիւները և պատրաստ դրամը։

ԻԱ. Ներկայացնել խնամակալութեան մինչեւ Մարտ ամիս
նախընթաց դպրոցական տարուան հաշիւը հանդերձ բացատրութիւն-
ներով և վերատեսչի կազմած ուսումնական տեղեկագիրը ի պարտ ու-
պատշած տնօրէնութիւն։

ԻԲ. Հաստատել հանգստեան թոշակի սնտուկ կրթական
պաշտօնէից համար Խնամակալութենէն կանխապէս վաւերացեալ կանո-
նաց համեմատ։

Յօդ. 30. Հոգաբարձութիւնն իրաւունք ունի արձակուրդ տալ Վե-
րատեսչին մինչև երկու շաբաթ, աւելի ժամանակի համար նա կը միջ-
նորդէ խնամակալութեան մօտ. իսկ որ և է ուսուցչին նա կարող է
Վերատեսչի առաջարկութեամբ արձակուրդ տալ մինչեւ երկու ամիս։
Իրեն է վերապահուած թոշակը վճարելու կամ չվճարելու մասին կարգա-
դրութիւն ընել։

Յօդ. 31. Հոգաբարձութիւնը Կ. Պոլսոյ Խնամակալութեան ամիջա-
կան և բացարձակ հսկողութեան ենթարկեալ է՝ իւր պաշտօնավարութեան
թէ 29րդ յօդուածի մէջ գծեալ և թէ այլ ամեն գործառնութեանց համար։

Յօդ. 32. Հոգաբարձութեան իրաւասութիւնը հաւաքական է և ան-
դամք չունին իրաւունք առանձնաբար միջամտելու գործոց։

Յօդ. 33. Հոգաբարձութեան նիստերը տեղի կ'ունենան Նախագահի
հրաւէրով ամիսը մի անգամ, և արտաքոյ կարգի՝ երբ հարկը պա-
հանջէ, և կամ երբ վերատեսուչը և մի անդամ գրաւոր պահանջեն։

Ի բացակայութեան Նախագահի Առաջնորդական փոխա-
նորդը կը կատարէ նորա պաշտօնն և ի բացակայութեան նորա Վերա-
տեսուչը կը հրաւիրէ։

Յօդ. 34. Նախագահը կը վարէ նաև Հոգաբարձութեան Ատենապե-
տի պաշտօնը։ Առաջնորդին բացակայութեան ատեն փոխանորդը կը
տեղակալէ և սորա բացակայութեան ատեն՝ Հոգաբարձութիւնը իւր մէ-
ջէն կը կարգէ առօրեայ Ատենապետ։

Յօդ. 35. Հոգաբարձութեան նիստը վաւերական կը համարուի,
երբ անդամներէն գոնէ չորսը ներկայ են։ Իսկ որոշմունք տրուելու են
ձայնից մեծամասնութեամբ. միայն թէ այդ ձայնից մին պէտք է լինի
եկեղեցեաց ժողովրդեան կողմէ ընտրուած անդամի և միւսը վերատեսչի
կամ Ուսուցչական Մասնաժողովի կողմէ ընտրուած անդամի ձայնը։

Որոշումները կ'արձանագրուին ատենագրութեանց մէջ եւ
կ'ստորագրուին ներկայ անդամներէն։

Յօդ. 36. Հոգաբարձութեան պաշտօնագրերը պիտի համաձայն լինին ըստ ամենայնի առենադրութեան և կրեն Նախագահի, Վերատեսչի եւ Քարտուղարի ստորագրութիւնը։

Յօդ. 37. Խնամակալութիւնը կը ճշդէ մասնաւոր հրահանգով քաղաքի Հայ եկեղեցեաց ժողովրդեան և ընթացաւարտ աշակերտաց կողմէն Հոգաբարձութեան անդամ ընտրելու եղանակը։

Ընտրելի են նոքա՝ որոնք առնուազն երկու տարիէ ի վեր կը բնակին այն քաղաքի մէջ, ուր կը գտնուի վարժարանը, լրացուցած են երեսնամեայ հասակն և օրինական արգելքի ներքեւ չեն։

Յօդ. 38. Ուսուցչական Մասնաժողովի կողմէն ընտրելի անդամոց ընտրութիւնը տեղի կ՚ունենայ յատուկ նստի մը մէջ գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ։

Քուէից բացարձակ առաւելութեան մէջ առաւելագոյն քուէ ստացողը կը լինի անդամ և հետեւեալը փոխանորդ։

Երբ առաջին քուէարկութեամբ բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկրորդ քուէարկութիւն կը կատարուի առաւելագոյն քուէ ստացող երկպատիկ ցանկի վրայ։

Յօդ. 39. Ուսուցչական Մասնաժողովի, քաղաքի Հայ եկեղեցեաց ժողովրդեան և Սանասարեան վարժարանի ընթացաւարտ աշակերտաց կողմէ ընտրուած Հոգաբարձութեան անդամք երեք տարի կը պաշտօնավարեն։

Դաւօրութիւն. Քաղաքի Հայ եկեղեցեաց ժողովրդեան կողմէ ընտրուած անդամոց մէկ երրորդ մասը կը փոխուի իւրաքանչիւր տարի, առաջին երկու տարիները վիճակաւ, իսկ յետոյ կարգաւ։

Յօդ. 40. Հոգաբարձութեան անդամները օրինաւորապէս ընտրուելէ յետոյ՝ ըստ կանոնագրիս, կը հաստատուին Սրբազան Պատրիարքի պաշտօնագրով։ Մինչև նորընտիր անդամոց հաստատուիլը, նախորդ անդամք կը պաշտօնավարեն։

Յօդ. 41. Քաղաքի Հայ եկեղեցեաց ժողովրդեան, Ուսուցչական Մասնաժողովի և Վարժարանի ընթացաւարտ աշակերտաց կողմէն ընտրեալ անդամներէն ո՛ ոք առանց բանաւոր պատճառի երեք անդամ անընդմիջաբար բացակայ գտնուի նիստերէն, Հոգաբարձութիւնը դադրած կը համարէ զնա իւր պաշտօնէն և կը հրաւիրէ փոխանորդը։

Յօդ. 42. Փոխանորդք կ՚անդամակցին Հոգաբարձութեան տեղակալելով անդամոց՝ նոցա բացակայութեան, հիւանդութեան և հրաժարման կամ պաշտօնէ դադարեցուցման դէպքերու մէջ։

Փոխանորդաց պաշտօնը կը տեւէ առաջին երկու դէպքին մէջ մինչեւ բացակայ կամ հիւանդ անդամոց վերադարձը կամ ապաքի-

նումը, վերջին դէպքին մէջ մինչև նոցա պաշտօնավարութեան ժամանակի լրումը։

Յօդ. 43. Ընտրանի լրացմամբ դադարեալ անդամը վերնորելի են։

ՎԵՐԱՏԵՍՈՒՉ

Յօդ. 44. Վերատեսուչը պետն է Վարժարանի ներքին վարչութեան նա պատասխանատու է Վարժարանի բարեկարգութեան և արդիւնաւորման ըստ ամենայնի։ այս պատճառաւ Վարժարանի բոլոր պաշտօնեայք նորա իրաւասութեան ներքեւ են։

Յօդ. 45. Վերատեսչի պաշտօնն ու պարտաւորութիւնն է հսկել Վարժարանի օրինաց և կանոնաց անթերի գործադրութեան վրայ, հսկել ընդհանուր դասախօսութեան եղանակի և ուսուցչաց պաշտօնավարութեան վրայ, աշակերտաց ուսումնական ինչպէս և արհեստական վարժից վրայ, նմանապէս միտ դնել կարգապահութեան և նիւթական ու բարոյական բարեկեցութեան։

Յօդ. 46, Վերատեսուչը Առենապետն է Ուսուցչական Մասնաժողովի, նա կանխաւ կը նշանակէ սոյն ժողովոյ պարբերական նիստերը, և կը գումարէ պատահական նիստեր, երբ ինքն հարկ տեսնէ և կամ երեք անդամ գրով պահանջեն իրմէ։ Նա կը հսկէ նիստերու օրինաւորութեան և որոշմանց արձանագրութեան և գործադրութեան վրայ։

Յօդ. 47. Վերատեսուչը կ՚ընտրէ Վարժարանի ուսուցիչները հմուտ և բարոյական յատկութիւններով օժտուած անձերէ, կանխաւ համաձայնելով Հոգաբարձութեան հետ թոշակաց քանակի մասին։ Վերատեսչին վերապահուած է ուսուցիչները արձակելու իրաւունքը։

Յօդ. 48. Վերատեսուչը կ՚աւանդէ իւր ընտրած առարկաները, նորա շաբաթական դասերու թիւը կը լինի վեցէն ոչ պակաս և տասներկուքէն ոչ աւելի։

Յօդ. 49. Վերատեսուչը կը կազմէ դասացոյց իւրաքանչիւր դասարանի օրական զբաղմանց համար։

Յօդ. 50. Վերատեսուչը կարող է դասերու ընթացքին մէջ արձակուրդ տալ որ և է ուսուցչի մինչեւ եօթն օր (Տես Յօդ. 30)։ Նա կը կարգադրէ որ և է ուսուցչի բացակայութեան ժամանակ պարապ ժամերը լեցնելու կամ աշակերտները զբաղեցնելու եղանակը։

Յօդ. 51. Վերատեսուչը ուսումնական տարեգլխէն քանի մը ամիս առաջ Հոգաբարձութեան և Ուսուցչական Մասնաժողովի որոշմանց հիման վրայ կը հրատարակէ Վարժարանին յաջորդ տարուան նոր աշակերտաց ընդունելութեան վերաբերեալ Յայտագիրը։

Յօդ. 52. Վերատեսուչը Ուսուցչական Մասնաժողովի խորհրդակցութեամբ կը կազմէ Հոգաբարձութեան ներկայացնելու համար տարեկան տեղեկագիր վարժարանի ուսումնական, բարոյական և առողջական վիճակի վրայ, իւրաքանչիւր դպրոցական տարուան վերջը։

Յօդ. 53. Վերատեսուչը պէտք է ունենայ Հայ լեզուի և պատմութեան գիտութիւն, բարձրագոյն կրթութիւն և մանկավարժական հմտութիւն. նա կընտրուի Կ. Պոլսոյ Խնամակալութեան ձեռքով և կը հաստատուի Պատրիարքական պաշտօնագրով (Տես Յօդ. 23)։

Դաւօրութիւն. Այժմ վարժարանի Տեսչութիւնը կը վարեն, ինչպէս Հոգեւոյս Հիմնադրի ժամանակ, իւր երեք սանները, Գէորգ Ռ-բուլեան, Յովսէփ Մատաթեան և Սարգիս Սոլիկեան, հաւաքական պատասխանատուութեամբ՝ համաձայն նորա տրուած հրահանգին։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Յօդ. 54. Ուսուցչական Մասնաժողովը կը բաղկանայ վարժարանի բարձրագոյն երեք դասարաններու լեզուայ և գիտութեանց ուսուցիչներէն, ընտ ատենապետութեամբ վերատեսչին։ Ի հարկին վերատեսչի հրաւէրով նիստերուն կարող են մասնակցիլ խորհրդական ձայնով և միւս ուսուցիչները՝ առանձին կամ բոլորը, ի թիւս որոց և այլազգեան և այլակրօն ուսուցիչներն և վարժարանի բժիշկը։

Արհեստների և արուեստագիտութեան վերաբերեալ խնդիրների քննութեան ժամանակ կը մասնակցին նիստերուն և արհեստանոցներին աւագ վարժապետները հաւասար իրաւունքով։

Յօդ. 55. Ուսուցչական Մասնաժողովոյ պաշտօնն է՝

Ա. Որոշել վարժարանի մէջ աւանդելի ուսմանց նիւթերն ու արհեստները՝ քննել և սահմանել իւրաքանչիւրին չափը և կատարել նոցա բաշխումը դասարաններու վրայ և որոշել ուսումնական և արհեստական զբաղմանց ժամերու թիւը մէն մի դասարանի համար և այս մասերուն վրայ տրուած որոշմունք գործադրութեան դրուելէ առաջ ներկայացնել Հոգաբարձութեան՝ ի վաւերացումն։

Բ. Կազմել աւանդելի առարկայից և արհեստից մանրամասն ծրագիրը և ընտրել վարժարանի մէջ գործածուելիք դասագրքերը։

Գ. Պատրաստել կանոններ թէ աշակերտաց ընդունելութեան և թէ նոցա դասարանէ դասարան անցնելու մասին։

Դ. Լուծել այս մասին ծագած խնդիրները։

Ե. Որոշել աշակերտաց վարձատրութեան կանոնները ի ծանր դէպքերու մէջ հարկ եղած պատիժը։

Զ. Յօրինել կանոններ Գրադարանի և Թանգարանի պահպանութեան և կիրառութեան համար։

Է. Կարծիք յայտնել իւրաքանչիւր աշակերտի աշխատասիրութեան, յառաջադիմութեան և վարուց մասին և կազմել վեցամսեայ և տարեկան վկայականներ իւրաքանչիւր աշակերտի համար։

Ը. Կազմել ընթացաւարտներու վկայականները։

Թ. Հոգաբարձութեան առաջարկել Եւրոպա ուղարկելի սաներ։

Յօդ. 56. Ուսուցչական Մասնաժողովը կը գումարի վերատեսչի հրաւէրով կանոնաւորապէս ուսումնական տարեգլխէն առաջ, նոր տարուան և Զատկի արձակուրդներէն առաջ, և երբ հարկը պահանջէ և կամ երեք անդամ գրով առաջարկեն վերատեսչին։

Յօդ. 57. Ուսուցչական Մասնաժողովոյ որոշմունք կը տրուին ձայնից մեծամասնութեամբ։ Ձայնից հաւասարութեան պարագայի մէջ վերատեսչի ձայնը վճռող դրութիւն ունի։ Բայց երբ վերատեսուչը համակարծիք չլինի մեծամասնութեան հետ՝ նա կարող է կարեւոր խնդրոց մէջ, երբ իւր կարծիքով որոշման գործադրութիւնն վնասակար է վարժանին, իւր իսկ պատասխանատուութեան տակ որոշման գործադրութիւնը յետաձգել և խնդիրն այն նստի ատենագրութեան և պատճառաբանութեան հետ ի միասին ներկայացնել Հոգաբարձութեան վճռին։

Յօդ. 58. Ուսուցչական Մասնաժողովը կ՚ընտրէ իւր մէջէն մի տարուան պայմանաժամով մի քարտուղար։ Իւրաքանչիւր ուսուցիչ պարտաւոր է ընդունիլ այդ պաշտօնը երբ ընտրուի, սակայն յաջորդ երկու տարիները կարող է հրաժարիլ ընտրութենէ։

Գ.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 59. Ներկայ Կանոնագրութեանս Մկրտիչ Սանասարեանի կտակի վրայ հիմնուած տրամադրութիւնք անփոփոխելի են. իսկ միւս տրամադրութեանց լարեփոխութիւնը կարող է տեղի ունենալ միմիայն Կտակակատար Պ. Եղեանի ձեռքով։ Յետ մահուան սորա, որ և է բարեփոխութիւն ընելու համար անհրաժեշտ է տեղական Հոգաբարձութեան Կ. Պոլսոյ Խնամակալութեան անդամոց երեք չորրորդի համաձայնութիւնը։

Յօդ. 60. Եթէ Կտակակատար Կարապետ Եղեանի մահուընէ յետոյ

Կ. Պոլսոյ Խնամակալութեան յաջորդէ (Տես Յօդ 27) մի այլ վարիչ մարմին, այս վերջնոյս և տեղական Հոգաբարձութեան անդամոց երեք չորրորդին միաձայնութիւնը, ինչպէս նաև Սուրբ Էջմիածնայ Գահակալ Ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոսի հաւանութիւնն ու հրամանը հարկաւոր են կանոնադրութեանս բարեփոխման համար։

Կտակակատար ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆ

25 Մարտ, 1892

Ս. Պետերբուրգ

Կանոնագիրս պատրաստեալ ըստ տրամադրութեան ԺԳրդ յօդուածոյ կտակի հանգուցեալ Աղա Միրզայի Սանասարեանց՝ ի ձեռն կտակակատարի նորին, Վսեմ. Գ. Կարապետի Եզեան, քննեցաւ ի Կրօնական եւ Քաղաքական ժողովոց Ազգ. Կեդր. Վարչութեան ի գումարումն անդ խառնեալ, որ ի 20 եւ ի 26 Մայիսի տարւոյս, եւ միաձայն հաւանութեամբ հաստատեցաւ:

՚Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչութեան

Քաղաքական ժողովոյ	Կրօնական ժողովոյ
ԱՏԵՆԱՊԵՏ	ԱՏԵՆԱՊԵՏ
ՍԻՄՈՆ ՄԱՔՍՈՒՏԵԱՆ	ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Հրամայեմք զգործադրութիւնն

16 Յուլիս 1892

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

Ի ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Կ. Պոլիս

Յաւելուածական տրամադրութիւն 26րդ յօդուածոյ, հաստատեալ ի խառն ժողովոյ Ազգ. Կեդրոնական Վարչութեան, ի նիստս նն. 5 Փետրուար 1899. համաձայնութեամբ Կտակակատար Գ. Կարապետ Եզեանի 1888 Դեկտ. 18 թուակիր գրութեամբն:

«Կ. Պոլսոյ խնամակալութիւնն ունի երկու օժանդակ անդամներ,
«որք կ՚ընտրուին բուն անդամներու պէս և փոխանորդաբար կ՚անդա-
«մակցին Խնամակալութեան նիստերուն, տեղակալելով անդամոց նո-
«յա բացակայութեան կամ հիւանդութեան կամ հրաժարման կամ
«պաշտօնէ դադարման պարագայից մէջ»:

ԿՏԱԿԱԳԻՐ

ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻ

10 Յուլիս 1886

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԷՆ ՌՆԱԳՐԷՆ)

Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն։ Ես ներքոյ ստորագրեալս, պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, առողջ մտքով և հաստատուն յիշողութեամբ, բարւոք դատելի 'ի դէպս իմ մահուան հետեւեալ կարգադրութիւնն անել իմ աշխատութեամբ վաստակած ամեն շարժական և անշարժ կայքերի մասին. 1) Իմ քրոջ եկատարինէ Սարգսեան Տիգրանեանցի որդուն՝ բժիշկ Լեոն Յակոբեան Տիգրանեանցին կտակում եմ 'ի սեպհականութիւն՝ ա) այդու երկու հողաբաժին, որոնք պատկանում են ինձ երկու կալուածագրի զօրութեամբ, առաջինը յորինուած է՝ — Թիֆլիսի Քրէական և Քաղաքական Դատարանի ատենում հազար ութ հարիւր յիսուն և ինը թուականի մարտ ամսի քսանեչորսին ընդ համարաւ վաթսունմէկ, և երկրորդը՝ Թիֆլիզի նոտար Մելիք կարագոզեանի մօտ յունուար ամսի տասներեքին, և հաստատուած Աւագ նոտարի ձեռքով չորսին փետրուարի հազար ութ հարիւր ութսուն և մէկ ամի ընդ համարաւ երեք հարիւր քսան և եօթ. բ) իմ ամբողջ տնային շարժական կայքը՝ բացի մատենադարանից, հայոց ազարանական մայրերից և այս կտակի հինգերորդ յոդուածում յիշատակուած առարկաներից, և գ) յետ իմ մահուան թէ առձեռն դրամով և թէ տոկոսաբեր արժէթղթերով և ուրիշ պարտամուրհակներով յերեւան գալիք դրամագլխից՝ մի հարիւր հազար ռուբլի առձեռն պատրաստ դրամ։ 2) Իմ մօտ գտանուող Իլիա Եակովլեւիչ Լէսորշչիկով ապասաւորիս, եթէ սա մինչև այն ժամանակ ապրի, երեք հարիւր ռուբլի և իմ աղախին Ադրաֆէնա Եակովլեւնա Մասլովային՝ մի հարիւր ռուբլի։ 3) Հայոց «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր Պետրոս Սիմէօնեանցին կտակում եմ ցկեանս տարեկան վեց հարիւր ռուբլի թոշակ, որի համար խնդրում եմ կտակատարներիս դնել ըստ իրենց հայեցողութեան վարկի որ և է հաստատութեան մէջ տասներկու հազար ռուբլի դրամագլուխ հինգ տոկոս բերող արժէտոմսերով և այս տոմսերի

կտրօնները, նրանց վճարման պայմանաժամը հասնելուն պէս, տալ Պետրոս Սիմէօնեանցին, որչափ նա կենդանի է. իսկ նրա վախճանելուց յետոյ միացնել այդ դրամը այն դրամագլխին որ պատկանում է իմ անունը կրող վարժարանի, որ այժմ գտա'նւում է Կարին. 'ի դէպս տոմսերի մէկ մասի և կամ բոլորի չիջման՝ ստացուելիք գումարով ձեռք բերել նոյն տեսակի նոր տոմսեր վերոյիշեալ Սիմէօնեանցի թոշակի անընդհատ հատուցումն ապահովելու համար։ 4) Տաճկահայաստանի վան քաղաքում եղած Ս. Սանդխտեան օրիորդաց վարժարանին, որի շինութիւնն ես եմ կառուցել, կտակում եմ տասն հազար րուբլի՝ այն պայմանով, որ այս դրամագլուխն ընդ միշտ անձեռնմխելի մնայ, իսկ տոկոսքը գործադրուի յօգուտ նոյն վարժարանի։ 5) Ծագմամբ տաճկաստանցի հայ լինելով և ըստ կարեւոյս կամենալով օժանդակել կրօնակից համազգիներիս բարօրութեան, որոնք Տաճկաստանում զուրկ են մնացած կրթութեան միջոցներից, ես թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում իմ մահուանս րոպէին յերեւան գալիք բոլոր մնացեալ ստացուածքս՝ լինին դրանք անշարժ կայք և կամ դրամագլուխներ, առձեռն դրամներ, տոկոսաբեր թղթեր, բաժնետոմսեր (actions), պարտամուրհակներ (obligations) բաժեր և պարտքի վաւերագրեր՝ միով բանիւ ինչ բանի մէջ և ո'րտեղ էլ գտանուին, — կտակում եմ 'ի շինութիւն և պահպանութիւն հայերի համար իմ հիմնարկած և անունս կրող վարժարանին, որ գտանւում է այժմ Կարին քաղաքում, Տաճկաց Կայսրութեան մէջ, ուր ազգակիցներս աւելի կարօտ են կրթական հաստատութեանց. իմ անուամբ հայոց համար հիմնուած նոյն վարժարանին կտակում եմ նմանապէս իմ մատենադարանը, ալբոմները, հաւաքածոյքն և տպարանական պարագաները։ 6) Այս կտակն իրագործելու համար կտակակատար կարգում եմ՝ Իսկական Պետական Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եզեանցին, Դրան Խորհրդական Գէորգ Գրիգորեան Նաւնգուլեանցին և իմ քեռորդուն՝ պաշտօնաթող Դրան Խորհրդական բժիշկ Լեւոն Յակոբեան Տիգրանեանցին. այս երեք անձանց ո'ր և է մէկի մահուան դէպքում՝ վախճանած կտակակատարի տեղն անցնում է իմ երեք սաներից (Գէորգ Արուլեան, Յովսէփ Մազատեան և Սարգիս Սողիկեան) մէկը քանի որ նրանք վարժարանիս ծառայութեան մէջ լինեն, վիճակով, որ հանելու են նրանք 'ի ներկայութեան տեղական Թեմակալ Առաջնորդի և վարժարանի պաշտօնատար անձանց, որի մասին պէտք է կազմուի ներկայ եղողների ստորագրութեամբ հաստատուած և Թեմակալ Առաջնորդի ստորագրութեամբ վաւերացրած արձանագրութիւն։ Սոյն արձանագրութեան վաւերացուած պատճէնները հաղորդւում են տե-

ղական Թեմական Վարչութեան և կտակակատարներիս, իսկականը պահւում է վարժարանի դիւանում։ 7) Իմ կտակակատարների վրայ պարտք եմ դնում՝ ա) վախճանելուս օրից վեց ամսուայ ընթացքում յերեւան հանել (ցուցակագրել) ինձնից յետոյ մնացած ամեն շարժական և անշարժ կայքերս և դրամագլուխներս. բ) ստանձնել այդ կայքերի և դրամագլուխների անօրինութիւնը. գ) վճարել կտակած դրամագլուխները, շարժական և անշարժ կայքը սոյն կտակի առաջին, երկրորդ և չորրորդ յօդուածներում յիշատակուած անձերին և հաստատութիւններին. դ) վարժարանիս կտակած իմ մնացեալ գումարներից, ոչ աւելի քան կէսը յընթացս հինգ ամաց զկնի մահուանս գործ դնել՝ Ռուսաստանում կամ արտասահմանում յանուն յիշեալ վարժարանի անշարժ կալուածքներ գնելու համար, եթէ առ այդ ո'ր և է արգելքներ յառաջ չը գան. իսկ եթէ այդպիսի արգելքներ յառաջ գան, այն ժամանակ թէ' իմ անունը կրող վարժարանի համար անշարժ կայքեր գնելու յատկացրած դրամագլուխն և թէ' յօգուտ վարժարանի կտակած բոլոր միւս դրամագլուխներս պահել յանուն նրա տոկոսաբեր թղթերով Պետական Բանկում Ռուսիոյ կամ որ և է Եւրոպական Պետութեան. ե) հետզհետէ գնուելիք անշարժ կայքերի անմիջական անօրինութիւնը յանձնել իմ անուան վարժարանի Հոգաբարձական Խորհրդին, եթէ կանոնադրութիւնն իմ կենդանութեան ժամանակ յօրինուած լինի. իսկ եթէ կանոնադրութիւնը կենդանութեանս ժամանակ յօրինուած չլինի, նոյն յանձնարարութիւնը պիտի կատարուի Հոգաբարձական Խորհրդի գործողութիւնները սկսուելուց յետոյ, այն կանոնադրութեան հիման վրայ, որ յօրինուելու է սոյն կտակի տասն և երեքերորդ յօդուածի համաձայն։ 8) Քանի որ կենդանի են գոնէ երկուքը իմ կարգած կտակակատարներից, որոնք են Կ. Յ. Եզեանց, Գ. Գ. Նաւնգուլեանց և Լ. Յ. Տիգրանեանց, իմ անուան ուսումնարանին կտակած կայքերիս գերագոյն վերահսկողութիւնն և վերստուգութիւնը (contrôle) պիտի նրանց պատկանի. սոյն իսկ կտակակատարներիս հայեցողութեան եմ թողնում որոշել, թէ Հոգաբարձական Խորհուրդն այդ կայքերի անօրինութեան վերաբերեալ ո՞ր խնդիրների մասին պիտի կանխաւ համաձայնութիւն խնդրէ նրանցից։ 9) Եթէ հայոց համար Կարին հիմնած վարժարանիս սոյն կտակի տասներեքերորդ յօդուածի մէջ ցոյց տուած սկզբունքներիս համաձայն յարատեւելուն արգելք եղող խոչընդոտներ յառաջ գան, իրաւունք եմ տալիս կտակակատարներիս փոխադրել իմ անուան վարժարանը մի ուրիշ հայաբնակ տեղ հին Հայաստանի սահմաններում, որպէս զի նա շարունակէ զարգանալ սոյն կտակում նշանակած սկզբ-

բունքներիս համաձայն։ 10) Կտակակատարները պէտք է միաձայն հաւանութեամբ գործեն։ Ի դէպս եթէ ո՛ր և է խնդրի առթիւ միաձայնութիւն չկայանայ, ցանկանում եմ որ խնդիրները ձայների առաւելութեամբ վճռուին, սակայն այն պայմանով, որ սոյն կտակի իններորդ յօդուածում նախատեսուած վարժարանի տեղափոխութեան խնդիրն ոչ մի դէպքում լուծում չըստանայ առանց կտակակատար Կարապետ Յարութիւնեան Եզեանցի յօժարութեան՝ քանի որ նա կենդանի է։ 11) Կտակս կատարելուց յետոյ՝ մահուանս օրից ոչ անագան քան հինգ տարուայ ընթացքում՝ կտակակատարներս պարտաւոր են հրատարակել հայոց լրագիրներում յընդհանուր գիտութիւն իրենց գործունէութեան տեղեկագիրը, իսկ վաւերագրերը յանձնել իմ անուան վարժարանի դիւանին և նրանց վաւերական պատճէնները՝ հայոց տեղական Թեմի Վարչութեան դիւանին։ 12) Որովհետև իմ կտակակատար Կարապետ Յարութիւնեան Եզեանցին ուրիշներից աւելի յայտնի են ինձ առաջնորդող շարժառիթներն և փափագներն անունս կրող վարժարանի նկատմամբ, ուստի յատկապէս նրան եմ յանձնում, քանի որ նա կենդանի է, վարժարանի գերագոյն տեսչութիւնն ըստ ամենայն մասանց վարչութեան, տարեկան ելևմտից նախահաշիւների հաստատութիւնը վարժարանի համար կառավարիչներ, դասատուներ և ուրիշ պաշտօնատարներ կարգելու և արձակելու, ինչպէս և նրանց գործունէութեան վերահսկելու իրաւունքը։ Պ. Եզեանցի հայեցողութիւնից կախուած կը լինի ցոյց տալ այն խնդիրները, որոնց վճիռը չէ կարելի առանց իւր հաստատութեան իրագործել։ 13) Եթէ մահուանս րոպէին դեռ կազմուած չլինի իմ անուան վարժարանի համար ինձնից հաստատուած մի մշտական կանոնադրութիւն, այն դէպքում յանձնում եմ Կարապետ Յարութիւնեան Եզեանցին յօրինել սոյն կանոնադրութիւնը մահուանս օրից ոչ ուշ քան երեք տարուայ ընթացքում՝ հետևեալ գլխաւոր պայմաններով. ա) հայոց համար հիմնարկուած իմ անուան վարժարանը դրւում է ամենայն հայոց Գերագոյն կաթողիկոսի՝ Ս. Էջմիածնի Պատրիարքի հայրական հովանաւորութեան ներքոյ. բ) աշակերտների թւում, վարժարանի միջոցներին համեմատ, լինելու են նաև ձրիավարժ սաներ, առաւելապէս հօրից–մօրից որբ և Հայաստանեայց Եկեղեցւոյն պատկանող, յամենայն դէպս ոչ նուազ քան երեսուն հոգի. գ) վարժարանի համար և նրան կից կազմակերպւում է մի Հոգաբարձական Խորհուրդ որի պաշտօնն է կառավարել վարժարանի կայքերն և վարժարանի տնտեսական մասը. դ) Հոգաբարձական Խորհուրդը նախագահ ունենալով Հայաստանեայց Եկեղեցւոյ

Վիճակային Առաջնորդին՝ պէտք է բաղկանայ իմ անուան վարժարանի վերատեսչից, նաև տեղական հայազգեան ժողովրդի և ուսուցչական խմբի ընտրած անդամներից։ Վերոյիշեալ երեք սաներս ցկեանս անդամ են Հոգաբարձական Խորհրդի։ Թէ ժողովրդից և թէ ուսուցչական խմբից ընտրուելիք անձանց թուի և նոյն իսկ ընտրութեան եղանակի որոշումը թողնում եմ կանոնադրութիւնը կազմողին (երեսնամեայ հասակը չըրացրած անձինք չեն կարող Հոգաբարձական Խորհրդի անդամ լինել). ե) վարժարանի կանոնադրութիւնը պէտք է բովանդակէ վերատեսչութեան և հաշուետւութեան կանոն, և պարտաւորութիւն դնէ վարժարանի Հոգաբարձական Խորհրդի վրայ իւրաքանչիւր տարի տեղեկագիր հրատարակելու յընդհանուր գիտութիւն վարժարանի դրութեան և նրա կայքի, վարժարանի մտից և ելից մասին, և կտակակատարների հայեցողութեան ներկայացնելու այդ տեղեկագիրը. զ) վարժարանին նուիրած կայքերիս և գումարներիս տարեկան եկամուտներից պէտք է հանուին տասն տոկոսիք մի առանձին հիմնադրամ կազմելու համար ի հայթայթումն պիտոյից վարժարանի այն աշակերտաց, որոնց վարժարանի վարչութիւնը օգտակար կը դատէ Եւրոպա ուղարկել կատարելագործուելու համար, և որոնք պէտք է ընտրուին առաւելապէս հօրից–մօրից որբ աշակերտներից, սակայն այս անհրաժեշտ պայմանով, որ ուղարկուողները պարտաւորութիւն յանձն առնեն՝ վերադարձից յետոյ իրենց գործունէութիւնը նուիրել իմ անուան վարժարանին կամ այլուր ըստ ցուցման վարժարանի տեսչութեան՝ ուղարկուելու ժամանակ նրանց յայտնած պայմաններին համաձայն. է) եթէ վարժարանի միջոցները թոյլ տան՝ նրանցից կարելի է օժանդակութիւն տալ ուրիշ հայաբնակ տեղերում վարժարաններ հիմնելու համար. և ը) դասաւանդութիւնը լինելու է հայոց լեզուով։ 14) Իրաւունք եմ տալիս իմ կտակակատարին և քեռորդուս՝ Լևոն Յակոբեան Տիգրանեանցին և նրա արական սերնդի հայազգեան աւագ շառաւիղին ըստ իւր հայեցողութեան երեք որդեգիր կարգելու ՚ի թիւս իմ վարժարանի ձրիավարժ սաների, պահպանելով այն կանոնները, որոնք սահմանուած են աշակերտների ընդունելութեան համար։ 15) Իմ անուան վարժարանին պատկանող անշարժ կայքերն և տոկոսաբեր թղթերը կարող են միայն կտակակատարներիս ձեռքով վաճառուիլ և այն՝ քանի որ նրանցից ոչ նուազ քան երկուքը կենդանի են. իսկ իմ կտակակատարներից երկուքի մեռնելուց յետոյ վարժարանին պատկանած անշարժ կայքերն և տոկոսաբեր թղթերը չէ կարելի օտարացնել, գրաւ դնել և ո՛ր և է պարտքով ծանրաբեռնել։ Այս մասին կտակակատարները պէտք է

պարտուպատշաճ կարգադրութիւն անեն և սոյն կամքիս անդերի կատարումն ապահովելու համար օրինական միջոցներ գործ դնեն։ 16) Եթէ վարժարանի շէնքը կենդանութեանս ժամանակ կառուցուած չլինի, տան շինութեան համար կարելի է գործ դնել յղուա վարժարանի կտակած միջոցներից ոչ աւելի քան յիսուն հազար րուբլի։ 17) Եթէ իմ կտակակատար Կարապետ Յարութիւնեան Եզեանցը վարժարանիս համար կանոնադրութիւն պատրաստելուց առաջ վախճանի, այն դէպքում տասներեքերորդ յօդուածի մէջ յիշատակուած հիմքերի համեմատ կանոնադրութիւն կազմելու գործը յանձնում եմ միւս կտակակատարներիս՝ սոյն կտակիս տասներորդ յօդուածի որոշած կարգով։ 18) Եթէ կտակակատարս Կարապետ Յարութիւնեան Եզեանց իմ անուան վարժարանի գտնուած տեղը գալով յժարի վարժարանի կառավարութիւնը յանձն առնել, իրաւունք եմ տալիս նրան ստանձնելու վարժարանի հետ և սրան կից լինելիք ամեն հիմնարկութիւնների վերատեսչի կոչումը ցկեանս՝ սոյն կոչման հետ կապուած ամեն իրաւունքներով ու պարտաւորութիւններով հանդերձ, պահպանելով սոյն կտակի՝ նրան որպէս կտակակատարի յատկացրած իրաւունքներն ու պարտաւորութիւնները. և 19) կը ցանկամ, եթէ միայն հնարաւոր լինի, թաղուիլ վարժարանիս գտնուած տեղում՝ Կարին։ (Ստորագրութիւն)։ Պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց։

Սոյն կտակը յօրինելու միջոցին ներկայ էին՝ Ս. Պետերբուրգի Հայոց ս. Եկատերինէ եկեղեցւոյ քահանայ Գէորգ Լազարեան Խանթարճեանց։ Ս. Պետերբուրգի 2-րդ կարգի վաճառական Յակոբ Աւէտիսեան Խոջէյնաթեանց։ Դրան խորհրդական Աղեքսանդր Իսահակեան Գուրգէնբեգեանց։ Նոտարի պաշտօն կատարող Պետր Մոկէյեվ։ Այս պատճէնը բառ առ բառ համեմատ է իսկական արձանագրութեանը, որ մուծուած է մատեան հազար ութ հարիւր ութսուն և վեց թուականին ընդ համարաւ չորս հազար երկու հարիւր ութսուն և ութ և արուած է պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցին։ Հազար ութ հարիւր ութսուն և վեց ամի տասն յուլիսի։

1890 ամի յունիսի 19։ Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, Ս. Պետերբուրգի Նահանգական Դատարանը, ըստ եօթներորդ Բաժնի, պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի կտակն'ի կատար ածելու մասին դեկուցումը լսելով կարգաւորեց՝. 19 մայիս 1890 թ. վախճանած ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի 10 յուլիսի 1886 ամի յօրինուած և ներկայացրած նոտարական

կտակը՝ որպէս քաղուածք Ս. Պետերբուրգի նոտար Կաչէնովսկու արձանագրութեանց մատենի առաջին մասին, որ վասն 1886 ամի, էջ 29—31, համար 48, հաստատել կատարածելու համար, որի մասին մակագրութիւն անել յիշեալ քաղուածքի վրայ, և հրատարակել Սենատի յայտարարութեանց մէջ. այս քաղուածքը տալիս պահանջել՝ հրատարակութեան համար 3 րուբլի, գիւանական մաքս 3 րուբլի 60 կոպ., և ժառանգութեանց մաքս 6480 րուբլի։ Յիշեալ մաքսերն և հրատարակութեանց գինն ընդ ամենը 6486 րուբլի 60 կոպ. մտած են Ս. Պետերբուրգի Նահանգական Գանձարանն և գրուած են ի մուտս պետական արդեանց 6835 յօդուածում։ Այս կտակը տրուած է կտակակատարին ըստ կտակի հանգուցեալ պաշտօնաթող ենթասպայ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցի՝ Գաղտնի Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եզեանցին։ 1890 թ. յուլիսի 5, № 5820։ Նախագահի օգնականի փոխանորդ Գրօսման, ատենադպիր N (Տ. Կ.)

Ես ներքոյ ստորագրեալս այսու հաւաստում եմ, որ սոյն կտակի առաջին յօդուածին համաձայն ինձ հասանելիք մի հարիւր հազար րուբլի առձեռն պատրաստ դրամը լրիւ ստացայ, նոյնպէս ստացայ կտակակատար Գաղտնի Խորհրդական Կարապետ Յարութիւնեան Եզեանցից և բոլոր ինձ կտակած անային շարժական կայքը յամենայնի համաձայն պրիստաւի պահպանողական ցուցակագրին։ Դրան խորհրդական բժիշկ Լևոն Յակոբեան Տիգրանեանց։

Ես՝ ներքոյ ստորագրեալս հաւաստում եմ, որ այս կտակի վրայ վերևում նշանակուած ստորագրութիւնն արուած է իմ՝ Աղեքսանդր Աղեքսէյևիչ Լեբեդևիս՝ Ս. Պետերբուրգի նոտար Տիմոֆէյ Դմիտրիեվիչ Անդրէյևի պաշտօնը կատարողիս ներկայութեամբ, նրա գրասենեկում, Սպասսկիյ քաղաքամասն, Եկատերինինսկիյ կանալ, № 24, ինձ անձամբ յայտնի Դրան խորհրդական բժիշկ Լևոն Յակոբեան Տիգրանեանցի ձեռքով, որի բնակութեան տեղն է Մոսկովսկիյ քաղաքամասն, Կոլոկոլնայա փողոց, № 9, 1890 ամի 11 օգոստոսի, ըստ արձանագրութեան մատենի № 1674։ Նոտարի պ. կ. Աղ. Լեբեդև, (Տ. Կ.)։

ԿՏԱԿԱԳԻՐ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԿԱՂԱՉԿԵԱՆՑԻ

5 Օգոստոս 1891

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ)

Հազար ութ հարիւր իննսուն և մէկ թուի Օգոստոսի հինգին ես, Ս. Պետերբուրգի Նօտար Տիմօթէոս Դմիտրիևիչ Անդրէև, — որ գրասենեակ ունիմ Սպասսկայա քաղաքամասի Եկատերինինսկի կանալի № 24ում, — ըստ հրաւիրանաց ինձ յականէ և յանուանէ յայտնի և արձանագրութիւններ կատարելու օրինական իրաւասութիւն ունեցող Աստրախանցի հայուհի Մարիա Մարտինովնա Կաղաչկովայի (Մարիամ Մարտիրոսեան Կաղաչկեանցի) ներկայացեալ նորա բնակութեան վայրը, Սպասսկայա քաղաքամասի Տորգովըյ Նըրբափողոցի № — ում, որ տեղ նա 'ի ներկայութեան՝ ինձ յականէ և յանուանէ յայտնի վկաների՝ Հայոց եկեղեցու քահանայ Գրիգոր Գրիգորևիչ Բուղադովի, որոնք բնակւում են՝ առաջինը՝ Սպասսկայա քաղաքամասի Նևսկի Պողոտայի № 40 ում, — և ինձ յականէ և յանուանէ յայտնի ատրպագրող իսկական Պետական Խորհրդական Վալերի Նիկոլաևիչ Մամոնտովի՝ որ բնակւում է Մոսկովսկայա քաղաքամասի Չերնիշև Նրբափողոցի № 16 ում, յայտնեց ինձ, որ ի դէպս իւր մահուան հետևեալ կտակն է անում. 1) Այն հայ եկեղեցուն որ տեղ ինքը կը թաղուի, կտակում է չորս հարիւր ռուբլի։ Այդ դրամը պէտք է Պետական տոկոսաբեր արժէթղթերի վերածել, որոնց տոկոսները տալու են նոյն եկեղեցու սպասաւորներին՝ որոնք տարին երկու անգամ կտակատարի որոշած օրերը, պարտաւոր են հոգեհանգստեան պատարագ մատուցանել՝ յիշատակելով նորա ծնողներին, եղբայրներին ու ամուսնուն։ Եթէ որ և իցէ պատճառով հոգեհանգստեան պատարագ չմատուցանեն, այն ժամանակ ի հաշիւ դորա, սպասաւորներին հասանելիք գումարը՝ եկեղեցու խորհրդարանի հայեցողութեամբ՝ պէտք է բաժանեն աղքատ ծխականներին։ 2) Այնուհետև մնացեալ իր շարժական կայքը, ինչ որ և լինի, նորանից թաղման և մի համեստ մահարձան կանգնեցնելու ծախքերը հանելուց յետոյ, կտակում է Սանասար-

եան վարժարանին, որ այժմ գտնուում է Էրզրումում (Կարնում)։ Այդ կայքի գանձման, պահպանութեան և վարժարանի կարիքների համար նորա մասին կարգադրութիւն անելու եղանակը, նա թողնում է կտակատարի կամեցողութեանը։ Բայց եթէ այս վերջինս մեռնի՝ թողնելով այդ կայքը առանց որ և է կիրառութեան կամ այլ կարգադրութեան, այն ժամանակ այդ կայքը պէտք է վերածել տոկոսաբեր արժէթղթերի, որոնք և պէտք է յանձնել ի պահպանութիւն Ռուսաստանի կամ այլ Տէրութեան Պետական Դրամատուններից մէկին։ Այդ արժէթղթերի տոկոսներով պէտք է՝ վարժարանի գործերը վերահսկող մարմնի տնօրինութեամբ՝ պահուին մի կամ աւելի ձրիավարժ տաներ վարժարանում, կամ նորա այլ կարիքները հոգացուին։ 3) Իբրեն կտակատար նա, Կաղաչկովան նշանակում է Դաղանի Խորհրդական Գերասիմ Արտեմիևիչ Էզովին (Կարապետ Յարութիւնեան Եզեանցին), որին և խնդրում է ըստ իւր հայեցողութեան կարգադրել նորա թաղումը և մահարձան կանգնեցնելը։ 4) 1884 թուի Յունիսի երկուսին Ս. Պետերբուրգի նոտար Դեմիխի մօտ արած իւր կտակագիրը, որ արձանագրուած է 1884 թ. անշարժ կայքերին չը վերաբերող արձարագրութեանց համար կազմուած արձանագրութեանց մատեանի 2ոդ մասում էջ 145 ընդհամարաւ 126, նա՝ Կաղաչկովան ոչնչացնում է։ Այս արձանագրութեան նախագիծը կտակողի առաջ կարդացուեց նորա ցանկութեամբ առանց վկաների, որի մասին՝ ստորագրելիս՝ յայտարարուեց նոցա, և դորան հաւանութիւն տալուց և հաստատանալուց յետոյ՝ թէ նա իր ազատ կամքով է ցանկանում այս արձանագրութիւնը կատարել և ըմբռնում է նորա իմաստն ու նշանակութիւնը, ներմուծուեց արձանագրութեանց մատեանում, որից կրկին կարդացուեց միևնոյն եղանակով։ Քաղուածքը՝ մի թերթ գրուագաւոր ութսուն կոպեկանոց թղթի վերայ գրուած՝ հարկ է յանձնել կտակող Մարիա Մարտինովնա Կաղաչկովայ։ Աստրախանի հայուհի Մարիա Մարտինովնա Կաղաչկովայ, իսկ նորա հիւանդութեան պատճառով և նորա անձնական խնդիրքով ստորագրեց իսկական Պետական Խորհրդական Վալերի Նիկոլաևիչ Մամոնտովը։— Այս կտակը, որ կտակողի կամքով մեր առաջ չ'կարդացուեց, նորա հիւանդութեան պատճառով և նորա անձնական խնդիրքով ստորագրեց իսկական Պետական Խորհրդական Վալերի Նիկոլաևիչ Մամոնտովը, այս մասին վկայում ենք Հայոց եկեղեցու քահանայ Գրիգոր Գրիգորիևիչ Տէր-Գրիգորեանց, Կոլեժսկի Ասեսոր Նիկոլայ Իվանովիչ Սուսանով, Տիտուլեարնի Սովետնիկ Սերգէյ Գրիգորիևիչ Բուդագով, նոտար Ֆ. Անդրէ։

Այս քաղուածքը, որ բառ առ բառ նման է իսկական արձանագրու-

թեանը, մուծուած է 1891 թուի ցուցակում ընդհամարաւ հազար ութ հարիւր և վեց և յանձնուած է կտակող Կաղաչկովային հազար ութ հարիւր իններորդ և մէկ թուի Օգոստոսի հինգին։

Ստորագրեց՝ ՆՕՏԱՐ Տ. ԱՆԴՐԷԻ

(Տ. Կ.)

1892 ամի Դեկտեմբերի 18 ին։ Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Ս. Պետերբուրգի Նահանգական Դատարանը իւր 7ոդ բաժնում ունկնդիր լինելուց յետոյ Աստրախանի հայուհի Մարիա Մարտինովնա Կաղաչկովայի կտակի գործադրութեան համար նորա հաստատութեանը վերաբերող թղթերի պարութան՝—սահմանեց, 1892 թուի Նոյեմբերի մէկին մեռած Աստրախանի (հասարակ դասակարգից) հայուհի Մարիա Մարտինովնա Կաղաչկովայի նոտարական կտակը, որ նա արել է 1891 թ. Օգոստոսի 5 ին և ներկայացուած է որպէս քաղուածք Ս. Պետերբուրգի նոտար Անդրէի 1891 թուի արձանագրութեանց մատեանի երկրորդ մասի էջ 22/25 № 10 ում, հաստատել 'ի գործադրութիւն, որի մասին մակագրել յիշեալ քաղուածքի վերայ և հրատարակել Սենատի յայտարարութիւններում։ Այդ քաղուածքը յանձնելիս պահանջել հրատարակելու համար 3 ռուբլի, գիւանական մաքսագինը 3 ր. 60 կ.։ Յիշեալ մաքսագները մուծուած են Ս. Պետերբուրգի Նահանգական Գանձարանի բաժինը և նշանակուած են Պետական եկամուտների 428 յօդուած. ամ իբրև մուտք։

Իսկական կտակը յանձնուած է Դաղանի Խորհրդական Գերասիմ Արտեմիևիչ Էզովին։

1893 ամի Յունուարի 18 ին։

Քարտուղար (Վ.Ա.Ի)

(Տ. Կ.)

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՏԱԿԱԳՐԻ

ԲԱՐԵՑԻՇԱՏԱԿ ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑԻ

2 Յունիս 1904

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԷՆ ՌՆԱԳՐԷՆ)

Եղբօր՝ Պետական Խորհրդական Իվան Արտեմեէվիչ Եզովին, կը կտակեմ ինձի պատկանող Տվինսքո-Վիթէպսքի երկաթուղիի արժէթուղթերու տոկոսէն ցկեանս օգտուելու իրաւունքը՝ այն պայմանով, որ այդ արժէթուղթերը պահուին Կայսերական Պանքայի Պետերբուրգի ճիւղին մէջ, և որ վերոյիշեալ եղբօր մահէն վերջը 200 արժէթուղթերս սեփականութիւն դառնան Յաճկահայաստանի Էրզրում քաղաքին մէջ գտնուող Սանասարեան վարժարանի, աւելցուելով անոր անձեռնմխելի դրամագլուխին վրայ (քաբիթալ) և անոնց մասին ի գործ դրուելով, 1893ին Ելևմտից նախարարէն վաւերացուած այն կանոնները, որոնք կը վերաբերին Պանքայի ճիւղի կողմէ հանգուցեալ Սանասարեանի իր անունով հիմնուած վերոյիշեալ վարժարանին համար կտակած տոկոսաբեր թուղթերու մասին ընելիք կարգադրութեանը։ Այն պարագային երբ Սանասարեան վարժարանը որ և է պատճառով գոցուի, իմ կտակած Տվինսքո-Վիթէպսքի երկաթուղիի արժէթուղթերէն ստացուած տոկոսները կամ դանոնք փոխարինող արժէթուղթերն 10 տարուան ընթացքին պէտք է դիզուին Պանքայի ճիւղին մէջ և պիտի յատկացուին սոյն վարժարանին, եթէ բացուի։ Սակայն եթէ 10 տարուան մէջ վարժարանը չբացուի, տոկոսներէն գոյացած ամբողջ գումարը կը յանձնուի Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան՝ Թուրքիոյ Մուշ գաւառին մէջ գտնուող Յովհ. Փրկիչի (Ս. Կարապետի) վանքը վերանորոգելու համար ի յիշատակ իմ ծնողաց։ Այս նամքիս իրականացման վերհսկողութեան իրաւունքը կը պատկանի Ս. Էջմիածնի Կաթողիկոսին։ Եթէ այս վերանորոգութեան միջոցին ալ Սանասարեան վարժարանը չի բացուի, այն ատեն իմ նուիրած վերոյիշեալ արժէթուղթերը, իրենց տոկոսով հանդերձ, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի միջոցաւ պիտի փոխանցուին նոյն Պատրիարքարանին յարակից գոյութիւն ունեցող Իզմիրեան մըրցանակաբաշխութեան Յանձնաժողովին և պէտք է գործադրուին ու

ծախուին գիտութեան զանազան ճիւղերէն լաւագոյն երկերու հայերէնի թարգմանութեան և հրատարակութեան, ինչպէս Հայոց լեզուի և պատմութեան վերաբերեալ ինքնուրոյն հեղինակութեանց, նոյնպէս ալ հին հայ գրականութեան արգասիքներուն հրատարակութեան համար։ Իշմիրեան Մրցանաբաշխութեան Յանձնաժողովը պարտաւոր է ամէն տարի այս կոակի համաձայն իր ունեցած գործունէութեան և իր տրամադրութեան յանձնուած գումարներու քանակի մասին հաշիւ ներկայացնել։ Այդ հաշուեկշիռը պէտք է հրատարակուի։ Վերոյիշեալ յանձնաժողովը իմ այս կարգը իրագործելու համար իրաւունք ունի իր պատասխանատուութեամբ և հայեցողութեամբ նշանակել ձեռնհաս անձնաւորութիւն մը կամ յանձնախումբ մը Ռուսիոյ, Թուրքիոյ կամ Եւրոպայի մէջ։ Կտակակատարները պէտք է հսկեն և անհրաժեշտ պարագային պէտք եղած միջոցները ձեռք առնեն իմ այս կարգադրութիւնը անթերիօրէն գործադրելու համար։ 20,000 ռուբլի կը կտակեմ ինչպէս զանազան անձանց և հաստատութեանց հետ իմ ունեցած թղթակցութիւններուս, նոյնպէս ալ իմ ձեռագիր և տպուած հեղինակութիւններուս տպագրութեան համար, պայմանով որ նամակներուս հրատարակութեան ձեռնարկուի մահէս 5 տարի վերջը միայն և հրատարակութեան գործն ալ յանձնուի կտակակատարներուս ընտրութեամբ ձեռնհաս անձի մը։ Եթէ հեղինակութիւններուս և նամակներուս հրատարակութեան համար իմ յատկացուցած 20,000 ռուբլիէն բան մը աւելնայ, այդ մնացորդը կրնայ գործածուիլ հին հայ դասական, գլխաւորապէս պատմական երկերու ժամանակին հրատարակութեան համար։ Կը խնդրեմ կտակակատարներէս, եթէ անձամբ չի յաջողիմ այդ ընել, Պետական Պարտուց հատուցման Յանձնաժողովի 500 ռուբլինոց տոմսակներէն գնել երկու հատ և փոխանցել Պետերբուրգի Հայոց Ս. Եկատերինէ եկեղեցիի անունին, այն պայմանով որ եկեղեցական խորհուրդը այդ տոմսակներէն գոյացած տոկոսները բաժնէ յիշեալ եկեղեցիի հոգեւորականներուն՝ եթէ անոնք յանձն առնեն հանգուցեալ ծնողքներուս և անոնց վախճանած զաւակներուն համար ամէն տարի Դեկտեմբեր 18ին (Հօրս մահուան օրը) և Փետրվար 6ին (Մօրս մահուան օրը) պատարագ մատուցանել և նաև Հոգեհանգիստ կատարել Զատկի երկրորդ օրը և կամ Ս. Յովհաննու Մկրտչի տօնին օրը։ Եթէ հոգեւորականութիւնը իր վրայ դրուած այս պարտականութիւնը ղլանայ կատարել, այն ատեն եկեղեցական խորհուրդը տոկոսներէն գոյացած գումարը թող բաժնէ աղքատ ծխականներուն։

Գործակատար Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011330